

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան Ֆրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՍ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան Ֆրանք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻԿ

20

ՍԱՆԴԻՍ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԽԵՇՏԱԿԱՆ

Կը հրահարակուի հաքար օրերը : Ծա-
նուցման տողը 10 Սանդիս : Երկու քիւ ա-
ռաջ հրահարակուած քերքը 40 Սանդիս :
Զհրահարակուած գրուքիւնը եւ յսրուիր :

Հասցէ
DIRAN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

—0—

ԴԱՅՐԱԳՈՅՆ ԼԻՐԱԹԻԹԻՆ

Անցեալ շաբաթ ու խմբագրու-
թեան հասցէին զրկուած էր բաց նա-
մակ մը , որ ամենապիւր բառերով կը
յարձակէր կարգ մը ծանօթ ազգային-
ներու վրայ : Այս նամակին հեղինակ-
ները թէեւ քաջութիւն չէին ունեցած
իրենց իսկական անուններով հրապա-
րակ ելնելու , սակայն Բոժոժիկ իւր տ-
վորական խորագիտութեամբը անմիջա-
պէս իմացուց մեզ գրողներու պարա-
գլուխին անունը , որ ծանօթ ընտանիք
մը մէկ շառաւիղն է , և զոր Բոժոժիկ
արգիլած է մեզ հրապարակել , առար-
կելով որ տակաւին իր անձը ապահովա-
գրութեան դրած չըլլալով թերեւ « ի
գին իրենց արեան » գիմադրելու պատ-
րաստ գտնուող պարոններուն գնտակ
բարբաւակունքին արժանանայ :

Զենք կարծեւ որ քաղաքիս մէջ
գտնուող հայ անհատ մը այդ գըր-
ուածքին պարունակութիւնը չատագովէ ,
վասն զի Բոժոժիկ պատահած է նոյն խիկ

այդ նամակին պարունակութենէն շահ
ունեցող կարծուած անձերու , որոնք զայ-
րոյթով ու պժգանքով մնկդի նշտած են
զայն :

Եթէ նամակագիր այդ մաս մը ե-
րիտասարդութիւնը պայտիսի պոռոտա-
խօսութեանց համար է որ կը ծափահա-
րէ ինքզինքը , « կեցցէ ուսումն և երի-
տասարդութիւն » գոչելով , շիտալը , մեզ
հետ շատեր ալ պիտի փախաղէին որ
մեր մէջ գոյութիւն չունենար երբէք ,
պակաս ըլլար այդպիսի մաս մը երիտա-
սարդութիւնը :

Բոժ — Իսկ մենք այդ խմբակին
կուտանք « Բամբ . . . որոտանեան եւ ի-
տասարդութիւն » անունը , որ իշ երգը
կը վերջացնէ պամ , պոմ , ֆըս , թըս ,
նազարաթով :

Արուսեակ Գալուստ Սահակեան
Յովհաննէս Կիրակոս Մեծիքեան

Այս երկու տղոց տեղոյս ազգային
վարժարանը ընդունուելու համար , պէտք
եղած պաշտպանը գտնուած է , ուստի
կը հրաւիրուին Հոգաբարձութեան դի-
մելով մուտքի արտօնագիրն առնուլ :

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Նկատելով որ՝ բաղաբիս Ազգ. վարժա-
րանաց նոր կաշմակերպութեան առթիւ թաղ.
խորհրդոյս և հոգաբարձութեան միջեւ տեղի
ունեցած բանակցութիւնք ազգայնոց ոմանց
կողմանէ թիւր մեկնութեանց պատճառ տու-
ած ըլլալով, կարգ մը անձանց ևս ասպա-
րէզ բացուած է հանրային շահուց պաշտ-
պանութեան պատրուակին տակ իրենց անձ-
նական կրից յաբուրդ տալու, անստորա-
գիր գրութիւններ ցրուելով ժողովրդեան մէջ.

Խորհուրդս այս առթիւ յայտարարե-
լով որ Ազգ. երկու պաշտօնական մարմնոց
մէջ կատարեալ համերաշխութիւն կը տիրէ,
Որոշած է՝

Ա. Հրապարակաւ նշաւակել այսպիսի
ձեռնարկներ, որոնք կը նկրտին միայն ազ-
գին մէջ երկպառակութիւններ արծարծելու
և՛ ազգ. իրական շահերուն փնտսելու.

Բ. Խնդրել յարգոյ ազգայիններէն որ
շարունակեն իրենց փտահոլութիւնը Ազգային
երկու խորհրդոց պարտաճանաչ գործունէ-
ութեան վրայ.

Գ. Ազգարարել որ ո և է պատեհու-
թեամբ Ազգ. գործոց բարւոք ընթացքին դէմ
խոչնդոտներ յարուցանելու յանգիւնողներու
նկատմամբ Խորհուրդս պիտի ստիպուի հարկ
եղած օրինական միջոցներ ձեռք առնելու.

Դ. Հրատարակել զայս որոշումը Ազգ.
տեղական լրագրաց միջոցաւ ի միամտութիւն
ժողովրդեան և ի զգաստութիւն որոց անկ է:

Ի դիմաց Թաղ. խորհրդոյ

Վ. Ատենադպրի Ատենապետ

Յ. Մ. ՄԱՎԻ Մ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ

Վառնա, 23 փետր. 1898

Լօնտրայի գաղութը Վարդանանց
հանգէսը տօնելով, հացկերոյթ մը տը-
ւած է բազմաթիւ հայ ապաստանեալ-
ներու:



ՀԱՅԵԼԻ Ի ԿԱՐԳ ԿԸ ՀՐԱԽԻՐԻ:

Անվայել ու անհամ հաճոյքներու
համար ունեւոր՝ բայց բարենպատակ
ձեռնարկներու համար չունեւոր ձեւացող
խղճահար պարտնները.

Փարա մը չի վճարելու համար Ազ-
քատախնամի գործառնութիւնները քըն
նաւատողները.

Մերձաւորագոյն մէկ ազգականին
չօգնելու համար Խաղ. խորհրդոյ դիմե-
լու միջոցը անոր ցոյց տուող բարեկե-
ցիկները.

Վառնաի ամեն ծակը ծուկը փըն-
տուելէ ետքը Պոլսէն ուտելիք բերել
տուած ըլլալին սրճարաններու մէջ
յայտարարող կարգ՝ մը որկրամոլները.

Փիլիպէի մէջ կտրող-կախող խումբ
մը յաբիթանները.

Դաւառացի խեղճ բեռնակրին 10-
20 սանդիւիլին անգամ խրթիլեալ ընե-
լով, անոր ձեռքի գրամը շարժալ կարգ
մը խղճահար յեղափոխականները կամ
անոնց կեղծերը.

Այսօր, վաղը, մէկ օրէն, մէկ ժա-
մէն պիտի հրատարակեմ, ըսելով կան-
խիկ գանձումներ ըրած՝ բայց մինչև
ցարդ բաժանորդներուն գուրճ մատալի
կարգացող Սամաթիայի պատմութեան
Տիար հեղինակը.

Կիրակի օրերը եկեղեցիին աւար-
տումէն ետքը տիկիններին առնել տա-
նելու պատրուակաւ կանանց վերնատան
գրանը առջև սլքտացող կարգ մը հա-
կիթ նոր-փեսաները, յիշեսչիք և ըզսի-
րահարեալ ծանծաղամիտները.

Թուրքերէն լեզուով տալիք լուրերն են երբեմն անհասկնալի կերպով գրող խմբագիրները .

Այն մէկ քանի թղթակիցները , որոնք բան մը գրած ըլլալու համար սըխալ տեղեկութիւններ կուտան լրագրաց .

Հայեցիի մէջ հրատարակուած անանուն մէկ գրութիւնը «ինծի համար գրուած է» ըսելով ինքզինքնին խաղք ընող կարգ մը կարծամիտները :



ԱՆԿՈՒՑԻՆ ԱՌԻՐԱՄՆ

Վերստին յաւելուած կրկին քօքօզական հեծութեան , նորին կուտուղի առ նոյն աղերս մաղթանաց բանի .

Ի խորոց սրտից խօսք ընդ մանկիզի ,

Արդ խնդրեմ ի քէն մանկիզդ տիեզերաց և ընկեր մեծաց , յորժամ դաս փառօք և երեւիս փայլունութեամբ քով գունդք քօքօզաց և զօրութիւնք կուտուղաց հիանան : Գաս հիացմամբ և ձայնիւ թռչիլով վերատին հարստացնել զհարստացեալս , բոլորովին շաշրթմիշ ընել զքօքօզացեալս : Գաս բոցով և դատես զկուտուղս անշէջ հրով : Ծագիս ի վերուստ քիւլիւնէիդ կողմանէ և խումբն կուտուղաց առաջի քոյ կանգնեալ երէւին , սիրտք որոց գրպաններու կենարարիդ յիշատակաւ միշտ ճենճերին :

Բանին մեքենայութիւնք , կանգնին անկեալք , լինի անհղ խըղճովը , և իւրաքանչիւրն ընդունի ըստ բաժնի : Մեծատունքն յայտնին ըստ հարստութեանցն , իսկ քօքօզքն տանջին ըստ

կուտուղութեանցն : Դատես զխըմէթդ չիգիտցողսն , տանջես զեղխութիւն ընողսն , պապակեցնես զկործանեալ խաղամուսն : Խնդան հարստացեալք և լան քօքօզացեալք , խայտան սարաֆքն և մերժին անկուտիքն յերեսացդ , գէմս ոմանց պայծառանայ և բաղմացն նուազի , շուայութիւնն ոչ անցանէ եւ ազա հութեան ոշթն ոչ մեռանի : Եւ արդ ի վերայ այսքանեաց յուսահատութեանց և ահարկու քօքօզութեանց հառաչելով հառաչեմ :

Այց աշա գաղղափրական ախալէն ախտացելոյս յաղագս որոյ կամ կուտուղ եւ քօքօզ , զի ի ժամանակին ոչ զյանձնառօրկանսն կատարեցի եւ ոչ ի հրաժարելեացն հեռացայ , խրատս առի եւ ի խրատէն յեղգացայ , ի կալգս տնըտեսադիտութեան հրաւիրեցայ , այլ կամակորութեամբ իմով անկրելի քօքօզութեան մատնուեցայ եւ յեւսաց գրպանակենարարիդ օտարացայ :

Ահա ի վերջ գօգօզական հառաչանացս յանթութենէ գարշահոտեալ նէֆէսիւք աղաչեմ :

Վերածո՛ զիս կրկին ի վիճակ կուտուղ , զի ի կորուստ և ի կործանումն երեւիմ , զի անկուտի պըտըտիմ , և ի մարդկանց անարգիմ : Իսկ եթէ աքար զարմեան սառուղ կիսեան ոսելով զոյն ոչ արդարացան , և ես տրուպ աշակերտ կողմայի և դամիանոսի անարծաթացորոց այսօր է յիշատակ , վկայեմ թէ աս ճամբան չըգմաղ է և քօքօզութիւնն չի քաշուելիք տէրտ մըն է : Անդ հանապազ եղիցի լալ և կրճտել թափթփած ատամանց :

Հ.

Յառաջիկայ երեքշաբթի գիշեր ՎԷՍԷԼՕ հայ թատերախմբին կողմէ պիտի ներկայացուի «Քաթիկոն Հօւարտ» ընտիր թատերերգութիւնը ինչպէս նաև ծիծաղաշարժ զաւեշտ մը :

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՄԱՏԵԱՆԸ

Օր մը Արամազդայ տօնը հանդիսաւորապէս տօնելու համար Դիք կեղեկն խնջոյք մը կուտան . Ողիմպոսի մէջ մեծ շարժում կ'ելլէ, փառաւոր ճաշ մը կը պատրաստեն, որովհետեւ ի պատիւ հօրն աւանդոց մէն մի խորտիկը երկնային ըլլալուն, որպէս զի անոր զարմանք պատճառեն . ուստի իւրաքանչիւր ոք իր ուզածին պէս անակ մը նուիրել կը մտաբերէ : Ուռեցիկ կարկանդակի համար շեփեստոս անուանի էր . Պաւմօնա պատշաճազարդ մրգեղէններ պիտի ծաքէր . Թէքէի՝ խնձորի բանդակ (մուրապպա) կը պատրաստէ . Ապոզոն խորտիկը կը դարձնէ . Բագոս գինին կը բերէ և Յունոս անուշեղէններն (գօմբօսթօ) . Երոս պտուղներ կը խոստանայ . Ասկիպես քողցրահեթեր կը քամէ . Պօսիթօն՝ կարմրամիս (ձուկ, Սօմօն) կը նուիրէ . Եւպէ՝ լաւագոյն քան զամենայն պղտղալից շոթեր շինել միտքը կը դնէ . ծերունին Պղոտօն՝ վարունգիկներ, Բրիաբոս՝ խեցեփոխներ կը բերեն . Եւրատոս հացի կեզեի պատառով արգանակ կ'ընծայէ . Աստղիկ շարաքարեղէնները կը հոգայ և վերջապէս շէրմէս աւելի որկրամուլ քան զգոն՝ Շիվէյի (պանդօկը) կ'իջնէ մեծ խեցեփոխ գտնելու համար :

Չ'երկարենք, ամեն բան կարգին է, խնջոյքին համար բան մը պակաս չէ, սոյն քաղաքավարութենէն Արամազդ յոյժ կ'զգածուի, ուստի սիրայօժար կ'երևայ և ամեն կերակուրներուն ալ մեծ պատիւ կընէ : Կուտեն, կը խմեն, կը խնդան, տխրութիւնը ի բաց կը փանեն, ապա աղանդերի պահուն հօրն աստուծոց երգը կ'երգեն . Ապոզոն բընար կը զարնէ, յանկարծուստ կը յօրինէ, ըստ որում հանգէսը իրեն կը ներշնչէ, Եւտէրփա՝ սրինգովը անոր կ'ընկերակցի և երգի միջոցին բաշում յիմարութիւնը կընեն, երկնային աւիշը կը բաժակցին և յաճախ ամփրոսեան նեկտարն շտապաւ ի մի ումպ կը

կ'ընեն այնչափ որ՝ խնջոյքին վերջերը առ ի շեղ կերթան : Նոյն պահուն Արէս ու Աստղիկ սեղանէն կը կծկեն, կ'աներևութան :

Կանիմէթեայ քով Ուրանոս սիրալիր կը քծնի, Աթենաս թէև կը խօսի՝ բայց զինքը մօիկ ընող չըլլար . Բագոս իւր աթոռին տակ կը գլորի, Բօիարոս եւ Յունոս համակիրք կը բորբոքին . Թէմիսի աչքերը կը վառվառն, Գլորա՝ անհանգիստ կըլլայ, Մօմօս՝ կ'երգէ, շեփեստոս՝ կը նիրհէ, Ասկիպոս իւր մերձաւորաց կը կառչի, շէրմէս ըստ սովորուածեան յօժարամիտ՝ սեղանէն ելնելու տեսն իւր սպանները գրպանը կը դնէ :

«Օ՛հ, օ՛հ, կրտէս Արամազդ, գէշ չեմ ըներ կարծեմ եթէ պահ մը տեղս երթամ, այս աղմուկները պոռկոս կը ցաւցնեն, շիտա կը շատ սքանչելի սեղան մը տուին ինձ, կերակուրները ընտիր էին . . . բայց ինչէ՞ն է որ քալած ատենս ամեն բան կը դառնայ . . . երթանք, պառկինք, հա՛, ինչ ապուշ եմ . . . աթոռիս վրայ մուցայ ճակատագրին մատնանը, ուր նայելու եմ թէ վաղը աղէկ պիտի լինի՞մ, և թէ պէ՞տք է որ հողմը իջնէ . երթամ՝ թուիս տակն առնում վայն, բայց որպէս զի վտանգ մը չի պատահի, յուշիկ յուշիկ քայլեմ . . . »

Արամազդ գիրքը կ'առնու և վերստին ճամբայ կ'ելնէ առ խարխափ . . . սակայն ճամբան բնաւ չի տեսներ, ամենեւին չի նշմարեր ըրած կորուստը, ճակատագրի մատնանը թուիս տակէն կիյնայ յերկիր : Մինչդեռ յերկինս բնաւ պատահած դժբաղդութեան վրայ չեն իսկ կասկածիր, գուշակեցէք թէ ո՞վ կը գտնէ այն ահօնելի մատնանը՝ որոյ մէջ ապաքայն՝ առաջուց, մահկանացուաց գձուձ կենցաղը գծած է . բիրտ աւաղակները, գողերը անտաւի մը մէջ կը փտնեն ճակատագրի սոյն մատնանը :

Անոր ծածկոյթէն, որ խիստ փայլուն էր, աւաղակապետն յանկուցեալ կը գոչէ :

— Կեցցէ՛, ոսկեհարթ տախտակ մէսա, կերպնում թէ կառօք մը փար ձգած են :

Այլ ո՞րչափ մեծ կըլլայ զարմանքն իր և իրեններուն, երբ ուշադրութեամբ կը դի-

տեն թէ մեծ գիւրք մըն է եղեր :

Անմիջապէս աւազակապետը զայն կը բռնայ և կը պոռայ . « Ընկերք , մեծ բաղ-դատումը մեզի դարկաւ . այս գիրքը կը սով-բեցնէ թէ ի՞նչպէս ապրելու ենք , մեր բաղ-դը կը պարունակէ , ուստի մօտեցէք որ իւր պատգամները լսենք : » Այս խօսքին վրայ աւազակը իրենց պետը կը շրջապատեն , ա-մենքն ալ հետաքրքիր են իրենց ճակատա-գիրն իմանալու , յաւատով որ հոն անվիշտ բերկրութիւն պիտի գտնեն :

— Պահ մը կեցէք , կըսէ պետը , ըստ օրինի նախ և առաջ իմ բաղդս նայելու . եմ :

— Մեծաւորն իրաւունք ունի , կը միր-մօտն աւազակք :

— Մէջերնուդ ո՞վ իր ականոցն ինձ պի-տի տայ , կը կրկնէ պետը , այնչափ կարգա-ցած չունիմ որ աչքս յստակ չի զօրեր :

— Ասէք տէր իմ , կը կոչէ աւազակ մը , սա միապակեայ ականոցն ունիմ , զոր ե-րէկ գողցայ , միակ շղթային համար :

— Տուր նայիմ . . . աչքիս աղէկ յար-մարեցաւ , իմ գործածածս ալ այս թիւն էր :

— Ընդհանրապէս անանկ կըլլայ , գո-ղին ձեռք ձգածը միշտ իրեն բանին յարմար կուգայ :

Աւազակապետը բաւական թղթատեց և վերջապէս սա վճիռը կարգաց .

« Նոր ոճի մի փոխառէն ուրիշ օրէն պիտի կախուիս » :

— Վա՛յ գետնին տակը անցնիս , սա-տանան տանի զեղապիրդ , գոչեց զայրագին ու գիրքը մեկզի նետեց :

Իրմէ հաջը մէն մի աւազակ իւր ճա-կատագիրը գիտնալ կուզէր , գիրքը ձեռք կառնուն , բայց ամենքն ալ կը զղջան , զի բաղդերնին միշտ մահաբեւում կը խոստանար իրենց . ուստի միաբերան կ'աղաղակեն :

— Պատանան տանի այս մատենը , որ արժէքաւոր բան մը չի պարունակելէ գատ-արուեստնիս զգուշիւ կը ներկայացնէ մեզի . պէտք է զայս մեր վաշխառուին ծախել . այս , ծախենք . . . և հիմա . անմիջապէս :

Ըստ սոյն որոշման , երկու աւազակք բաղար կերթան , ուր կրնան գիւրաւ մօտ գտնել այն ամեն աւազակներ՝ որք զգուշա-ւոր մարդիկ են ևւ վաշխառուներու հետ յարաբերութիւն ունին :

Մեր գողերը կը ներկայացնեն մտտեա-նը իրենց վաշխառուին , որ մէկ երկու թուղ-թը դարձնելէն ետքը կըսէ .

— Ես ապիկայ չեմ ուզեր , վասն զի միտքը չեմ հասկնար :

— Այս գիրքը կը սովորեցնէ քեզի թէ ի՞նչպէս ապրելու ես :

— Տէր ողորմեա . այդ ալ չի գիտ-նալի՞ք բան է . . . ապրելը ստակով կըլ-լայ , ստակով . անանկ գիրքի , թուղթի թեր-թի այլ եւս ստակ տուող շատ չի կայ :

— Բայց գոնէ կողքին համար բան մը վճարէ , տես , որչափ շքեղ է , ոսկի է :

— Է՛հ , սանկ . . . չեմ կարծեր որ մեծ բան մը արժէ :

— Ինչ կուտաս նէ տուր , ամբողջ բը-սակդ ուզող չի կայ .

Վերջապէս վաշխառուն չնչին գնով մը ծախու կառնէ ճակատագրին մատենը ևւ աւազակաց հեռանալէն ետքը կը սկսի զայն թղթատել՝ ըսելով . — Ոսկեշահ առեւտուր մը ըրի . այս գիրքը ստուգիւ գանձ մ'է . . ապագայն գիտնալ , գուշակաց արուեստն է այն . . . փիլիսոփայական բարն է այն . . . երջանիկ գաղտնիք . . . բայց նախ եւ առաջ տեսնենք թէ բաղդը ի՞նչ վերապահած է իմնի :

Էւ մատենին մէջ իւր անունը բնտուց , փութանակի աչքէ անցուց . . . լափեց . . . հապճեպեց ու վերջապէս սա գտաւ :

« Ի քանիսի մեռանիցիս » :

— Ի բանտի մի . . . ուրեմն գետնն անցնիս , սատանան տանի քեզ , կակազեց սարսափահար , եւ պահ մը յետոյ յարեց . այս գիրքը լաւ բան մը չի պարունակեր . գրաւ կը դնեմ թէ սուտ է . ջանանք ու-րեմն ծախել զայն . համոզելով զյաճախորդն

Թէ ամենեւին չի ստեր: Գրացիս, մեծ պա-
րոնը կրնայ առնուլ, զինքը համոզելու եմ
որ շահիմ: Իմ ուզածս ալ այս է: քսան
Փրանքի անպէսք եղաւ ինծի, եթէ հազարի
ծախեմ՝ ստանն առած կըլլամ:

Այս մտածմամբ ճամբայ կելնէ, իւր
ցնցոտի զգեստին տակ պահելով ՃԱԿԱՏԱՆ-
ԳԻՐՆ, և չերկարենք, ճամբան ոչ ոք կը
մակաբերէ թէ իր ճակատագիրն է որ մօտէն
կանցնի:

Վաշխառուն խեղոյն պարոնին կը ներ-
կայանայ:

(Շար.)



ԲՈՒՐԻՄԻ ԳԻՐՆԵՐՈՒԱՆ
ՀՐԷԱԿԱՆ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Բոժոժիկ, որ կը կարծէինք թէ յոգ-
նած ու ձանձրացած էր Բարեկենդանի
պարահանդէսներէն, չորեքշաբթի գի-
շեր կը յաջողի պարասրահի դռնէն ներս
մտնել, ու այս անգամ թուչունի մը նը-
ման թատերաբեմի առաստաղին վրայ
թառած, աչքէ չի փախցուներ անցած
գարձածը:

Ահա իր տեղեկագիրը.

«Նոյն գիշերը հրեա թատերախումբ
բին կողմէ տրուած ներկայացումը վեր-
ջացածին պէս՝ մեծ ոգեւորութիւն մը
տիրեց սրահին մէջ. աւելածուք երեան
եկան, աթոռները վերցուցին, գետինը
մաքրեցին ու չորագին շտկեցին շտկու-
տեցին:

Մատի վրայ համրելու չափ չիմա-
կաւոր պարոններ, որոնց բառական էին
հրեա դերասանութիւնները:

«Նասո ցանցաւ կերպով կը տես-
նուէին մերիններէն կարգ մը երիտա-
սարդներ, որոնք թե թեւի կը պտտէին:

«Հրեա դերասանութիւնք իրենց խա-
վախիւսները անկաթէ կընեն նախա-
պէս տեսնուինքներ սարքելով:

«Կէս գիշերէն մէկ ժամ ետքը նը-
ւագախումբը հրէական հետեւեալ աղ-
գային երգով հանդէսը կը բանար:

Պայաթ գաբիսինտա պէն եօւտում օնի,
Մալի տիւ շալվառի պէյազ տիւ. տօնի:

Ներկայք յոանկայս խորին ակնա-
ծութեամբ ունկնդրեցին այս հռչակա-
ւոր երգը, որ էսկիծի կասպարի գլուխ
դործոցն է, և երկիցս, երիցս, չորիցս
ծափահարեցին:

Տիւլժէն — Հայտէ պագալում,
պաշայաճալի, հէր քէս տամասինա սա-
հիպ օլտուն. ա՛ բլաս:

— Ա՛ բլաս էֆէնտում, ա՛ բլաս:

— Էզ ճումպուշէզ պօյնազ:

— Ագի վիէն Պօխօրանչի, անտէզ
վիզալի:

Եւ սկսան պարել:

— Միւսիւ Խաչիկ, պիւր տամա ա-
լլալ սէն տէ օյնասա՛նա:

— Պէն վազ կէշտիւմ:

— Նի՛չիւն.

— Պիւր աղ էվվէլ եանըլտըզ, պի-
րիսիլէ անկաթէ օլտուզ, գա՛րտաշ, տա-
հա օյնամատան, «Պանա պիւր պիւրա իլէ
սալամին եէտիր», տէր տէմէզ, հէմէն
գօլունու պրագտըմ:

— Տէմէք քի օյնա Բըշ օլտան, պէ-
նի լոգանթայա կէօթիւր տէյէճէք:

— Հիչ չիւպհէ իթմէ:

— Պէսպէլի գարնընը տօյուրմա-
տան պուրայա կէլմիշ քի պատիհալա-
տան տօյուրտուն:

— Է՛հ, չաչկըն պիրիսինի պուլուր-
սա՝ տուրմայրպ տոյուրսուն:

Նոյն միջոցին օթեակներէ մէկուն
մէջ ասպետական գլխարկով երկու շիք
եւ գեղեցիկ երիտասարդներ մօղբօնբօ-
նի մը գալուստը ողջունեցին մեծ խըն-
դութեամբ եւ յետոյ կառքով մեկնեցան
ճաշակելու համար . . . ա՛լա նաբօլի-
թէն մաքարօնեա մը:

Այս պարահանդէսը երկու ժամ
տեւեց ու ամեն մարդ իր տունը վազեց՝
ցուրտէն տը, տը, տը, տը, գողալով:



ՄԱՆՐ—ՄՈՒՆՐ

Ստախօս մը մեկուն հետ կը խօսէր .
ճանչնոր մը անոր մօտենալով՝ «Արդեօք նո-
րէն ի՞նչ սուտեր է գլտորածդ,» ըսելուն՝

— Ի՞նչ պիտի ըլլայ, քեզ կը գովեմ
բարեկամիս, պատասխանեց անմիջապէս:

Ծեր կին մը խօսակցութեան մը մի-
ջոցին ըսաւ թէ՝ «սիրտը չի ծերանար»:

— Իրաւունք ունիս մամիկ, պատաս-
խանեց պատրաստաբան օրիորդ մը, սիրտը
չի ծերանար, միայն թէ ծերացած մարմնոյ
մէջ բնակիլը չուզեր:

Երկու դրացի հարսեր:

Ա՛հ, բո՛յր իմ, արդեօք աշխարհիս
մէջ կա՞յ մեր սեռէն մէկը որ ամուսնանալէն
ետքը հանգիստ ըրած ըլլայ:

— Ժամանակաւ հատ մը կայ եղեր:

— Ո՛հ, բիւր երանի՛ իրեն. բայց ար-
դեօք անունը կրնա՞մ իմանալ:

— Ինչո՞ւ չէ, ահա մեր նախամայրը,
Եւա:

— Բայց ինչէ՞ն պիտի հասկնանք ա-
նոր ալ հանգիստ ըրած ըլլալը:

— Որովհետեւ ոչ կեսուր ունէր, ոչ
տագր ու պարօնատտ եւ ոչ ալ տալ պուտագ:

Մուրացկան մը աղքատիկ մարդու մը
տան դուռը կը գտնէ, զոր 8 տարեկան
տղայ մը կը բանայ:

— Զա՛ւակս, հայրիկդ կամ մայրիկդ
ո՛ւր է:

— Ի՛նչ պիտի ընես:

— Փորս անօթի է, քիչ մը ուտելիք
պիտի ուզեմ:

— Սա տոպրակիդ մէջ պահած հացե-
րէդ քանի մը կտոր ինծի տաս նէ՝ ո՛ւր ըլ-
լալին կիմացնեմ:

Մուրացկանը անմիջապէս տոպրակէն
բաւական հացի կտորուանք տղուն յանձնե-
լէն ետքը դուռը կը քաշէ կը գոցէ եւ ճամ-
բան կը շարունակէ, քիթն տակէն առճկական
սա առածը մըմալով. — Պէթէրտէն պէթէ-
րի վար տըր, տէտիքլէրի սահիհ իմիշ—:



Կ Ա Լ Վ Ա Ն Ի Ս Ի

Ամեն տեսակ

տպագրական կա-

ղապարներ պատրաստող, յաւել-
անձնական եւ թէ՛ առևտրական կնիքներ:
Մոյն կնիքները որ ըստ վերջին դրութեան
այդինձէ կը շինուին, հրապարակի վրայ երե-
ցած քառուղե կնիքներէ աւելի դիմացկուն են
եւ դիւրութեամբ կը տպագրուին. գինն ալ
քառուղեի գինէն տարբերութիւն չունի: Քա-
ղաքներէ ըլլալիք յանձնարարութիւնք փութով
կը կատարուին: Դիմել ի Ղառնա Չիլիկի-
լէր փողոց թիւ 561: Գին դահացուցիչ:



Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵՆ

ՀԱՆԴԻՍԻ

Վարկենական Տպագրութիւն

Ա Յ Յ Ե Տ Ո Մ Ս Ի

• 100 հատը 2 ֆր. կը տպագրուի և ա-
մոր տուփին մէջ կը գտնուի Այցեւորման գոր-
նածաւածեան հրահանգը պարունակոր տէտրա-
ծը, որուն կողքին վրայ տպեցածսին տիրոջ ա-
նունը տպագրուած պիտի ըլլայ: Գիմը խմբա-
ւորութեան: Քաղաքներէ ըլլալիք յանձնարա-
րութեան թղթատարի ծախք 30 սանդիմ-
յաւանարարողին վրայ է: Գրամի փոխարէն
Պուլկարական 5, 10 և 15 սանդիմնոց նա-
մակագրոջմ կ'ընդունուի: Կանխիկ:

ԷՐԲԵՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՆՆՏԻ

Գըլ կէճէլէրինէ մախսուս զայլթ կիւ-
լիւնճի վէ էյլէնճէլի իշպու գամէտի 32 սա-
հիֆէտէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէ-
նիճէ վէ լիսանը թիւրքճէ օլարապ վարնատա
թիւթիւնճիւ ախ.քքիանլարընտա 30 սանթիմ
ֆիաթլէ սաթըլմագտա սըր: Թաշարարտան
իսթէյնլէր եալընը 30 սանթիմլիք բօթա
բուլը զիրաէ մուհարրէր նամըմա կէճնտէր-
մէլի ախլէր:

Մ. ԽԱՉԻԿԵԱՆ, 2 նճի Ուլասթ, 1104
Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պուլնտան պէօյլէ սախի էյլէնճէլի վէ ֆա-
խէլի գամէտիլէր տախի բէյտէրբէյ նէշր օ-
լունաճաղը պէյան օլունըր:

Отговоренъ-редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаимность“—Варна:

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պուլիսի, Թիֆլիսի և
Վիեննայի մէջ հրատարակուած հայերէն
գլխաւորական և պատմական գիրքեր,
գնումն և վաճառումն ամեն տեսակ
նամակադրոշմերու: Նաեւ գլխաւորական
պիտոյքներ: Քաղաքներէ եկած յանձ-
նարարութիւնք փութով կը կատարուին

6



ԳԿԻՇԱԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի
Կամ Զուարճալի Բաղդադցոյց
Ընտանեկան

Երկսեռ ամէն հասակի ընթերցողաց զը-
բօսալի ժամանցներ տուող սոյն գիրքը կը
ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով
գիմը մեր խմբագրութեան:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԷՋԻ

ԿԱՄ

ԴԱՍՍԳԻՐԲ ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԵՏՍ

ՓՈԳՐԻՅ ՏՂԱՅՈՅ

Այս երկարանը, իր տեսակին մէջ առա-
ջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով,
կը պարունակէ մանկական զուարճալի երգե-
րու քանի մը ոտանաւոր առակներ և կրնայ
երախայներուն ծառայել նաեւ իբր ընթեր-
ցանութեան գիրք որուն պարունակութիւնը
եթոսեցուցիչ և հրահանգիչ է միանգամայն
անոնց համար:

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը մա-
քուր և կազմը վայելուչ:

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կիզրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
Չրդ. թաղ, թիւ 1104: